# ,Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում վճարովի հիմունքով սովորող ուսանողներին ուսման վճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու մասին**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2023 թ. օգոստոսի 24-ի 1449 որոշման 18-րդ կետով և հիմք ընդունելով ՀՊՏՀ ռեկտորի՝ 2023 թ. սեպտեմբերի 7-ի հրամանով սահմանված՝ **«ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու» կարգի 12-րդ կետը՝ քոլեջը իր միջոցների հաշվին կարող է ուսման վճարի փոխհատուցում տրամադրել վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, որոնք ներառված են ներքոհիշյալ սոցիալական վիճակին համապատասխանող խմբերում և ունեն բարձր առաջադիմություն.**

1. **<u>Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 25 տոկոս.</u>**

**<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>**

- դիմում՝ ծնողի կողմից (ուսանողի անչափահաս լինելու դեպքում).
- ծնողի (ուսանողի անչափահաս լինելու դեպքում) և ուսանողի անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- տեղեկանք՝ սոցիալապես անապահովության մասին՝ տրված միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից.
- տեղեկանք՝ ընտանիքի կազմի վերաբերյալ:

2. **<u>Միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 35 տոկոս.</u>**

**<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>**

- դիմում՝ ծնողի կողմից (ուսանողի անչափահաս լինելու դեպքում).
- ծնողի (ուսանողի անչափահաս լինելու դեպքում) և ուսանողի անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- ուսանողի ծննդյան վկայականը.
- ծնողի մահվան վկայականի պատճենը.
- միածնող լինելու դեպքում դատարանի որոշումը կամ միածնողությունը հաստատող այլ փաստաթղթեր:

3. **<u>2 և ավելի անչափահաս կամ 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ուսանողներին՝ 20 տոկոս.</u>**

**<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>**

- դիմում՝ ուսանողի կողմից.
- ուսանողի անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- ուսանողի անչափահաս երեխաների ծննդյան վկայականների պատճենները, իսկ ուսանող երեխաներ ունենալու դեպքում՝ տեղեկանք ուսումնական հաստատությունից:

4. **<u>Վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 20 տոկոս.</u>**

**<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>**
- դիմում՝ ծնողի կողմից (ուսանողի անչափահաս լինելու դեպքում).
- ծնողի (ուսանողի անչափահաս լինելու դեպքում) և ուսանողի անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- ընտանիքի ուսանող երեխաների ծննդյան վկայականների պատճենները.
- տեղեկանք՝ ուսանող լինելու մասին (այլ ուսումնական հաստատությունից կամ ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջից).
- ծնողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

5. **<u>Ուսանողներին, որոնց ծնողն ունի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն (ծանր և խոր աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակում)՝ 25 տոկոս.</u>**

**<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>**
- դիմում՝ ծնողի կողմից (ուսանողի անչափահաս լինելու դեպքում).
- ծնողի (ուսանողի անչափահաս լինելու դեպքում) և ուսանողի անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- ուսանողի ծննդյան վկայականի պատճենը.
- ծնողի՝ հաշմանդամ լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճենը.
- հաշմանդամ ծնողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

6. **<u>Բարձրլեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների, ուսումնական հաստատությունների մանկավարժների երեխա ուսանողներին՝ 20 տոկոս .</u>**

**<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>**
- դիմում՝ ծնողի կողմից (ուսանողի անչափահաս լինելու դեպքում).
- ծնողի (ուսանողի անչափահաս լինելու դեպքում) և ուսանողի անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- ուսանողի ծննդյան վկայականի պատճենը.
- տեղեկանք՝ ծնողի բարձրլեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցում կամ ուսումնական հաստատությունում մանկավարժ աշխատելու վերաբերյալ.
- մանկավարժ ծնողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

**7. Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 20 տոկոս.**

- դիմում
- անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- երեխայի ծննդյան վկայականի պատճենը:

**8. Համալսարանի և քոլեջի աշխատողներին և աշխատողների երեխա ուսանողներին՝ 30 տոկոս.**

- դիմում.
- ծնողի և ուսանողի՝ անձը հաստատող փաստաթղթի և սոցքարտի պատճենները.
- տեղեկանք աշխատավայրից:

**Դիմումները և կից փաստաթղթերը ներկայացնել ուսմաս մինչև 2024 թ. փետրվարի 2-ը ներառյալ:**

**Հարցերի դեպքում զանգահարել +374 (10) 62 57 00 հեռախոսահամարով:**